

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱԴԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ «ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ»

Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր մենագրությունը¹ նշանակալի ներգրում է մեր պատմա-բանասիրական գրականության մեջ:

Հովհաննիսյանի մենագրության արժեքն ու նշանակությունը ավելի ակնառու կդառնա, երբ այն քննության առնենք՝ նալբանդյանագիտության զարգացման ընթացքի մեջ: Հենց այդ առնչությամբ էլ գիտական առանձին հետաքրքրություն է ներկայացնում նալբանդյանագիտության անցած ուղին, որը հատուկ ուսումնասիրության արժանի թեմա է:

Հովհաննիսյանի մենագրությունը քննարկելիս ու գնահատելիս՝ հարկ է նկատի ունենալ նալբանդյանագիտության անցած ուղին, նախ՝ մինչև հեղինակի առաջին նշանավոր գործի՝ Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր»-ի հրապարակումը և ապա՝ նրան հաջորդած քսանամյակի զբաղանդությունը, ներառյալ և Նալբանդյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի քառահատոր գիտական-ակադեմիական հրատարակությունը: Այդ ամենը նկատի ունենալով միայն, կարելի կլինի ճիշտ և ըստ արժանվույն գնահատել այս նոր աշխատությունը:

1. Իր պրոբլեմատիկայով և առաջադրված հարցերի լուծումով՝ Հովհաննիսյանի մենագրությունը նալբանդյանագիտության անցած ամբողջ ճանապարհի ամենածավալուն հանրագումարն է: Նա հաստատորեն հենվում է այն լավագույնի վրա, ինչ-որ կա նալբանդյանագիտական ամբողջ գրականության մեջ սկսած մեծ ռևոլյուցիոնների կյանքն ու գործն առաջինն ըստ արժանվույն գնահատողների՝ Հարություն Սվաճյանի ու Մատթեոս Մամուրյանի ոգեշունչ հոգվածներից, Բերցենի ու Օդարյովի սրտագին բնութագրումներից և նրա մասին եղած առաջին կենսագրական համառոտ ակնարկից (գրված 1868 թ.) մինչև Նալբանդյանի հերոսական կյանքի ու գործունեության արժեքավոր «Տարեգրությունը» (1954):

Հովհաննիսյանի մենագրությունը հենվում է նաև ուսումնական ռևոլյուցիոն դեմոկրատների՝ Բելինսկու, Գերցենի, Օգարյովի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և մյուսների կյանքին ու գործունեությանը վերաբերող ամբողջ գրականության բազմակողմանի իմացության վրա:

Հեղինակն ամենալայն չափով օգտագործել է նաև գրեթե բոլոր այն անտիպ վավերագրերն ու բազմազան նյութերը, որ կարող էին ընձեռել Երևանի Թրիլիսիի Մոսկվայի ու Լենինգրադի արխիվները: Մենագրության գիտական հավաստիության երաշխիքներից մեկը նաև հենց այդ է՝ բազմաթիվ արխիվ

¹ Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Հայպեհհրատ, գիրք առաջին, 1955, 800 էջ, գիրք երկրորդ, 1956, 618 էջ:

Դերի, կարելի է ասել, արշարավոր Խոնդերի շանագիր ուսումնասիրությունը, որ կատարել է Տեղինակը, սկսած այն օրերից, երբ նա ձևնարակել էր «Անտիպերկեր»-ի մեծարժեք հրատարակությանը: Անցած ավելի քան քսանամյա ժամանակամիջոցում փիլիսոփայի քանակությունը կուտակված արխիվային թանկարժեք գիտական հանքանյութը Տեղինակը մեծ հմտությամբ օգտագործել է եր այս երկի հյուսվածքի մեջ:

Տեղինակի օգտագործած աղբյուրների շարքում նկատելի առկա են գրավում այն նյութերը, որոնք ժամանակի բնթուղիում կուտակվել են նաև իր՝ Հովհաննիսյանի անձնական արխիվում, զգալի քանակությամբ ստացված Նալբանդյանի մերձավոր ժամանակակիցների հետազոտությունները:

2. Հովհաննիսյանի մենագրությունն իր բնույթով, իր պրոբլեմատիկայի ու ժամանակի բնորոշումով, ոչ միայն Նալբանդյանի կյանքն ու գործունեությունն է պատկերում Լադիսլայի ամենալայն շրջանակի մեջ, այլև, բաց կռիվյան ու փաստորեն, այն՝ ավելի դարաշրջանի 19-րդ դարամիջի 30-ամյակի (40—50—60-ական թվականների, մասամբ և հետագա տասնամյակի) հայ հասարակական-քաղաքական ու փիլիսոփայական մտքի և հասարակական ու քաղաքական շարժումների, ազատագրական պայքարի պատմությունն է ուրվագծում:

Մենագրության անգամ այն գլուխները, որոնք կարծես առավելագույն Նալբանդյանի կյանքի այս կամ այն կտավի, նրա աշխարհայացքի ու գործունեության այս կամ այն բնագավառի բնութագրմանն են նվիրված, փաստորեն շատ ավելի լայն բնորոշում ունեն, քան պետք է ավելի խնդրում Նալբանդյանին բնութագրելու համար: Կարելի է ասել, որ ամբողջ երկհատոր բնագրաձևածավալ մենագրության մեջ սակավաթիվ են այն գլուխները, որոնք առավելագույն վերաբերում են Նալբանդյանին: Արևու հատորումն էլ մենագրության բաժինների ու գլուխների գերակշռող մասը իր բովանդակությամբ կրկնակի ու եռակի չափերով ավելի է, քան Նալբանդյանի կյանքի ու գործի անմիջական բնութագրումն է պահանջում: Բայց, իհարկե, այդ չի նշանակում, թե հարցերի այդպիսի լայն բնորոշումն ու ծավալումը օրգանապես չի կապվում Տեղինակի ուսումնասիրության կենտրոնական խնդրի հետ, բնդհակառակը՝ այն միայն լիովին արդարացնում է աշխատության արտահայտիչ վերնագիրը՝ «Նալբանդյանը և նրա ժամանակը», որն, բաց երևույթին, Տեղինակը հղացել է հենց Նալբանդյանի «Հեղեղը և նորա ժամանակը» փիլիսոփայական աշխատության անալոգիայով:

Հովհաննիսյանի մենագրության լայն պատմա-քննական բնորոշումների մասին գաղափար տալու համար հիշենք մի քանի գլուխների բովանդակությունը: Ահա, օրինակ, առաջին հատորի առաջին բաժնի երկրորդ գլուխը՝ «Բախում ոտախնայի հետ» վերնագրով (35—62): Այս գլխի 28 էջից միայն 2—3 էջն են վերաբերում պատանի Մուխալի կենսագրությանը, մնացածը անգործարձնում է «ոտախնայի միջավայրի պատկերը» իր ներքին հակագրություններով: Վերնագրի տակ նշված հիմնական կետերը բացահայտում են գլխի բովանդակությունը. — «Տիրացու Մուխալը հոգևոր կառավարության գրագիր», — առ առաջին կետն է, որի շարադրանքը գրավում է մոտ մեկ ու կես էջ: Այնուհետև՝ «Հասարակական առաքելը», «Գ. Պատկանյանը որպես քաղաքների ղեկավարությունների թարգման», «Գյուլագինների ու քաղաքացիների բախումները», «Ներսես Աղաթանգեղ», «Նկեղեցական վերիների սեփմը», և ապա միջան-

կյալ մի կետ՝ «Նալբանդյանի ընդհանուր հկենյանի հետ» և «Կեղծված նամակների պատմությունը»: Իսկ այնուհետև՝ «Հոգևոր և աշխարհիկ զպրոցական սիստեմների բախումը», «Գ. Պատկանյան և Խ. Արսլյան», «Պատկանյանի զիրքավորումը Աշտարակեցու ընդհանուր բաղադրականության դեմ», «Պատկանյանի կտլանքը»: Եվ, վերջապես նորից Նալբանդյանի մասին, որպես սուտինայի դեմ «վերսկսված պայքարի ղեկավարի», և «Մտրակի, փավազանի ու սակեպարիի զաշինքը նրա դեմ»: Հաջորդ՝ երրորդ, չորրորդ և հինգերորդ գլուխները («Հանդրման Մոսկվայում», էջ՝ 62—86, «Գաղափարական պինման ճանապարհին» էջ՝ 87—106, «Գործակցություն Ստ. Նազարյանցի հետ» էջ՝ 107—126) զրեթև ամբողջովին վերաբերում են Նալբանդյանին: Բայց և ահա այդ գլուխներին հաջորդող «Հյուսիսափայլ» վերնագրով 2-րդ բաժինն իր ութ գլուխներով (127—283): Այստեղ տրված է ոչ միայն Նալբանդյանի, այլև նրա ու Ստ. Նազարյանի համատեղ գործունեության և, ընդհանրապես, «Հյուսիսափայլ»-ի, որպես լուսավորական հրապարակախոսության օրգանի՝ բնութագրերը, հարակից նաև բազմաթիվ այլ հարցեր, ինչպես՝ «Խուսահայ մամուլի ուղղությունները», «Հյուսիսափայլ»-ի միջոցով ծավալված լուսավորական պրոպագանդան որպես հայերի ազգային կոնսոլիդացման միջոց» (158—164), «Հայ կնոջ ազատագրման խնդիրը» (165—180), իսկ այս առնչությամբ հեղինակն անդրադառնում է հայ ընտանիքի վիճակի բնութագրմանը, ոչ միայն ըստ «Հյուսիսափայլ»-ի հեղինակների, այլև բերում է Ստ. Ոսկանյանի, Մ. Թադիսյանի, Ծերենցի, Կ. Փանոսյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Բաֆու և Գրիգոր Արծրունու համապատասխան մտքերը, ինչպես նաև նույն հարցի արձագանքները Սմբատ Շահազիզի «Լեռնի վիշտը» պոեմում և Մ. Մամուրյանի «Հայկական նամականի»-ում:

3. Ընդհանուր առմամբ մենագրության ամենահետաքրքրական ու արժեքավոր մասերից է «Հյուսիսափայլ»-ին վերաբերող բաժինն իր մյուս գլուխներով հանդերձ՝ «Հյուսիսափայլը» և ընթերցողները», «Շրջադարձ դեպի ռեոլյուցիոն լուսավորականությունը», «Նալբանդյանի պայքարը ազատ խոսքի և ազատ մամուլի համար»: Այս բաժնի վերջին՝ 8-րդ գլուխը նվիրված է Նալբանդյանի և «Հյուսիսափայլ»-ի ամենակատաղի հակառակորդներից մեկի՝ Գ. Վ. Ավագովսկու «Կարբին ու նրա դեմ մղված պայքարին, առանձնապես «Հյուսիսափայլ»-ի էջերում (252—283):

Արժեքավոր ու հետաքրքրական է այդ բաժինը: Այստեղ առաջին անգամ առավել բազմակողմանիությամբ պատկերում է «Հյուսիսափայլ»-ի գործունեությունը, բացահայտում նրա խորապես պրոգրեսիվ բովանդակությունը և առաջատար դերը հայ գրականության, հրապարակախոսության, հասարակական մտքի պատմության մեջ: Այդ էջերը նշանակալի և արժեքավոր են նաև «Հյուսիսափայլ»-ի երկու հիմնադիրների ու ղեկավարների, փաստորեն նաև երկու գլխավոր աշխատակիցների փոխհարաբերությունների պատմությունը, նրանց համագործակցության բնույթն ու նշանակությունը փաստական մեկնաբանություններով ներկայացնելու տեսակետից: Նկատենք, որ այս բաժնի ոչ բոլոր էջերն են անառարկելի, բայց «Հյուսիսափայլ»-ի պատմությունը, ըստ որում, առաջին հերթին, նրա հիմնադիրների ու գլխավոր աշխատակիցների համագործակցության բնութագրումը տրված է գիտական լրջությամբ: Այդ բաժինն արժեքավորվում է և նրանով, որ «Հյուսիսափայլ»-ի առնչությամբ համառոտ ակնարկով բնութագրվում է հայ մամուլի ու հրապարակախոսության վիճակը մինչև

«Հյուսիսփայլ»-ի հանդես գալը և նրա գոյության տարիներին, թե՛ արևելյան և թե՛ արևմտյան հատվածում:

4. Մենագրության կարևորագույն արժանիքներից է Նալբանդյանի հանրային, գրական ու հասարակական գործունեության ընթացքում (1853 թ. սկսած, տարեցտարի արագորեն ընդարձակվող շրջանակներում, նախ՝ արևելահայկական, ապա՝ համադժպին ու համառուսական մասշտաբով) անսահմանորեն ընդարձակված նրա անձնական կապերի ակնառու բացահայտումը: Ընդ որում կոնկրետ բնութագրվում են Նալբանդյանի հետ կապված և կամ նրա գործունեությանն առնչվող բազմազան գործիչներ՝ Ն. Նախիջևանից, Մոսկվայից ու Պետերբուրգից սկսած մինչև արտասահմանյան ուղևորությունների բոլոր այն վայրերը (Կ. Պոլիս և Իզմիր, Փարիզ և Լոնդոն, Կալկաթա ու Երուսաղեմ և այլն), ուր նա մարդկանց է հանդիպել և որևէ չափով առնչվել նրանց հետ: Իսկ այդ մարդկանց թիվը, հավանաբար, հարյուրից ավելի է: Այդ թիվը մենք կարող ենք անսխալ որոշել Հովհաննիսյանի մենագրության մեջ ամփոփված հարուստ նյութի ու տվյալների հիման վրա:

Մենագրության մեջ բազմակողմանիորեն բացահայտված են ողուս ռեուլյուցիոն-դեմոկրատիայի գործիչների հետ Նալբանդյանի ունեցած սերտ կապերն ու հարաբերությունները, հանրագումարի են բերված բոլոր այն տվյալները, որոնք առ այսօր հնարավոր է եղել ձեռք բերել, թե՛ տպագիր աղբյուրների և թե՛ արխիվային, մինչև իսկ բանավոր աղբյուրների աննախընթաց լայն ընդգրկումով: Ամենից ավելի լայն չափերով Հովհաննիսյանի այս մենագրության մեջ է մեզ ներկայանում հայ ռեուլյուցիոն դեմոկրատիայի տեսաբանն ու քաղաքական առաջնորդը՝ ողուս ռեուլյուցիոն դեմոկրատիայի մեծ գործիչների՝ Վ. Բելինսկու, Ա. Գերցենի, Ն. Օգարյովի, Ն. Չերնիշևսկու, Ն. Դոբրոլյուբովի և մյուսների հետ ունեցած իր գաղափարական կապերով: Չի մոռացվել ու չի արհամարհվել նաև Մ. Բակունինի հետ Նալբանդյանի ունեցած առնչությունն ու սերտ կապը, որի կողքից անցնում են գրեթե բոլոր Նալբանդյանագետները, մասնավորապես, վերջին երկու տասնամյակներում, անգիտանալով այն, որ Նալբանդյանի գործունեության շրջանում Բակունինը «Լոնդոնի պրոպագանդիստների» շարքում շատ նշանավոր դեմք էր, միասնական գործակցությամբ կապված Գերցենի ու Օգարյովի հետ, արժանացած նաև Մարքսի ու էնգելսի դրվատական գնահատականներին ընդհուպ մինչև 1866—1867 թթ.: Ուրեմն, Նալբանդյանի սերտ կապն ու սրտակից բարեկամությունը «Լոնդոնի պրոպագանդիստ», ռեուլյուցիոն-դեմոկրատ Միխայիլ Բակունինի հետ է եղել և ոչ թե 60-ական թվականների վերջերից սկսած՝ ռուսական ու համաեվրոպական անարխիզմի տեսաբանի ու ղեկավարի դեր կատարած Բակունինի հետ, որի վնասակար ուղղության դեմ անհաշտ ու եռանդուն պայքար էին մղում այդ տարիներից սկսած, Մարքսն ու էնգելսը, ինչպես նաև ողուս ռեուլյուցիոն դեմոկրատներ Գերցենը, Օգարյովը և մյուսները:

Հեղինակը ոչ միայն ջանացել, այլև զգալի արդյունքների է հասել, բազմակողմանիորեն պարզելով Նալբանդյանի իրական կապերը ողուս ռեուլյուցիոն դեմոկրատական մտքի ներկայացուցիչների հետ, «ծանրանալով հատկապես նրա սոցիալ-քաղաքական ու փիլոսոփայական հայացքների կազմավորման փոթորկահույզ այն շրջանի վրա, որ նշանակալի անկյունաքար՝ կազմեց հայ հասարակական-քաղաքական առաջավոր մտքի պատմություն մեջ» (հատ. 1, էջ 10—11):

Առաջին անգամ Հովհաննիսյանն է հանգամանորեն ու համոզիչ պարզել, որ Նալբանդյանի մտածողության կազմավորման առաջին լուրջ խթանը հանդիսացել է ուսուցիչական գեմոկրատիայի նախահայր Վ. Բելինսկու բարերար ազդեցությունը՝ «Յաղագս հայկական մատենագրության ճառի» գրության օրերից սկսած («Գաղափարական զինման ճանապարհին» գլուխը՝ 1-ին հատորում և այլն)։ Իսկ Բելինսկու գաղափարական ազդեցության բարերար նշանակությունը, առավել ցայտուն կերպով, բացահայտվում է ազգի, ազգության նալբանդյանական տեսության շարադրանքում։

5. Ա. Հովհաննիսյանի մենագրության մեջ սիստեմավորված ու համադրված է Նալբանդյանի ամբողջ աշխարհայացքն իր բոլոր կողմերով։

ա) Աղգային հարցի նալբանդյանական տեսությունը, որն ընդհուպ մոտենում է մարքսիստական տեսությանը, մասնավորապես, ազգի, որպես պատմական կատեգորիայի իր ըմբռնումով, ազգերի լիակատար իրավահավասարության պահանջով, ռասսայական տեսության և ազգային բացառիկության իրավունքի անվերապահ մերժումով։

Այս հարցին է նվիրված ո՛չ միայն «Մտորումներ ազգության հարցի շուրջը» հատուկ գլուխը (հատ. 2-րդ, 197—233), այդ հարցի նկատմամբ Նալբանդյանի հայացքների շարադրանքը կա մենագրության այլ և այլ բաժիններում ևս։ Մենագրության մեջ ցույց է տրված, որ ազգային-ազատագրական շարժման ուղիների և խնդիրների նալբանդյանական ըմբռնման հիմքում ընկած է ազգային հարցի ռեյոլյուցիոն-գեմոկրատական տեսությունը։

բ) Շարադրելով Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները, հեղինակը համոզիչ կերպով հերքում է բանասեր-տնտեսագետ Թ. Ավդալբեգյանի դրույթը այն մասին, թե Նալբանդյանը ֆիզիոկրատիզմի հետևորդ է։ Այս խնդրին հեղինակն անդրադառնում է երկրորդ հատորի վերջում՝ «Ետմահու արձագանքներ» հատվածում։

գ) Նալբանդյանի իմացաբանական-փիլիսոփայական հայացքների սիստեմատիկ շարադրանքը ցույց է տալիս, որ նա «Երկրագործությունը» գրելուց հետո էլ մասնակի շեղումներով, բայց հաստատորեն հաղթահարում էր ո՛չ միայն յուրովի ըմբռնված Բոկկյան տեսությունը մարդկային հասարակության կյանքում բնական-աշխարհագրական գործոնների վճռական նշանակության մասին, այլև ֆոյերբախյան անտրոպոլոգիզմը։ Հետևելով Չերնիշևսկուն, Նալբանդյանը հաստատում էր մատերիալիստական փիլիսոփայության դիրքերում։

Մենագրության մեջ ցույց է տրված, որ փիլիսոփայության բնագավառում Նալբանդյանի ապրած վերընթաց էվոլյուցիան, նրա վճռական շրջադարձը իդեալիզմից դեպի մատերիալիզմը, իր բնորոշ ու ցայտուն արտահայտությունն է գտել նրա գրական ու գեղագիտական հայացքներում (տե՛ս «Ռեալիստական էսթետիկայի հիմնավորումը» և «Գրական քննադատության շուրջը» գլուխները, հատ. 2, էջ 415—478) կրոնի ու բարոյականության վերաբերյալ հայացքներում («Մտորումներ կրոնի ու բարոյականության շուրջը», նույն տեղում, էջ 336—377), գրական լեզվի տեսության («Նոր գրական լեզվի տեսությունը» գլուխը, նույն տեղում, էջ 378—414) և պատմա-հասարակագիտական հայացքների ձևավորման մեջ (նույն տեղում, էջ 478—522)։

Հեղինակը բազմակողմանիորեն ցույց տալով Նալբանդյանի փիլիսոփայական էվոլյուցիան իդեալիզմից դեպի մատերիալիզմը, բացահայտում է այն առանձնահատուկ հայացքը, որ ուներ Նալբանդյանը գիտության գործնական-

Հաստիքակալան նշանակության նկատմամբ, ընդհանրապես, և փոխհատվածության նկատմամբ, մասնավորապես:

Հեղինակը նախանշանին, որպես մտածողի նաև իր փոխհատվածական հայացքներով, իրավացիորեն նույնատիպ է համարում ռուս մատերիալիստական փոխհատվածության ներկայացուցիչներին:

Մենագրության մեջ նախանշանի զեղարկն ստական ստեղծագործությանը առանձին գլուխ չի հատկացված: Նախանշան-գրողը, բանաստեղծը, արձակագիրը, պամֆլետիստը չի բնութագրվում առանձին-առանձին հատվածներում: Բայց ավելի ահալի ու բնույթի մենագրության մեջ այդպիսի առանձին գլուխներ համապատասխան տեղ չէին էլ ունենա:

Պատմաբանի ու փոխհատվածի գիտակցության նայելով նաև նախանշան-գրողի ստեղծագործությանը՝ հեղինակը բացահայտել է նրա զաղափարական ու պատմական հարուստ բովանդակությունը, հմտորեն օգտագործելով այն իր մենագրության գրեթե բոլոր գլուխների շարադրանքի մեջ: Մենագրության հեղինակը նախանշան-գրողի ստեղծագործությունը գիտել ու գնահատել է իրրև դարաշրջանի «ճշգրիտ հիշատակարան, ինչպես պատմությունը» (եջ. 1, էջ 279):

6. Հովհաննիսյանի մենագրության կենտրոնական պրոբլեմներից մեկը, առանց որի ձիշտ լուծման, անկարելի է հասկանալ ու գնահատել նաև նախանշանին, որպես «նույնացիտն-ղեմոկրատի, որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենաառաջնորդ զաղափարախոսի ու առաջնորդի, — դա՛ ավելի դարաշրջանի հայ հասարակական հոսանքների խմբավորումն ու նրանց բնութագրումն է:

Արևելահայ իրականության մեջ Հովհաննիսյանը տեսնում է հիմնական շորս հոսանք:

ա) «Ինտելիցիտն կղերա-ազայական խմբակցություն»՝ հանձինս ինչպիսիք և Հարություն իսախանյանի, Գաբրիել վ. Այվազյանի և Սարգիս վ. Չալայանի, Մսեր Մսերյանի և Ստ. Մանգինյանի, Մկրտիչ Էմինի և Առ. Արարատյանի, Այ. Բահրյանի, Այ. Շիրմազանյանի, Հովս. Չերքեզյանի և նրանց հետևորդների:

բ) «Ազգային պահպանողականներ» — այսպես է կոչվում երկրորդ խմբակցությունը կամ հոսանքը, որի ահպական ներկայացուցիչներն են Մարկոս Աղաբեկյանն ու Պետրոս Շանշյանը, Գև. Հախվերդյանն ու Պ. Սիմոնյանը, Գև. Տեր-Ալեքսանդրյանն ու Կարապետ Շահնազարյանը, Համբ. Էնֆիաճյանն ու Բ. Սարգիս Բաստամյանը: Ըստ հեղինակի կոնցեպցիայի, այս խմբավորման մեջ են՝ թե՛ Գաբրիել քահ. Պատկանյանը, և թե՛ նրա բանաստեղծ որդին՝ Ռ. Պատկանյանը:

գ) Լիբերալ-բուրժուական կամ նացիոնալ-լիբերալ հոսանքը, որի գլխավոր ներկայացուցիչը Ստ. Նազարյանն է՝ նրա շուրջը համախմբված «մարդկանցով», մեծ մասամբ «Հյուսիսափայլ»-ի աշխատակիցների ու նրա «քնկերակիցների» (բաժանորդների) շարքերից:

դ) Վերջապես չորրորդ հոսանքը կամ «խմբակցություն» ղեմավարողական, «նույնացիտն-ղեմոկրատական հոսանքն է Միրայել Նախանշանի գլխավորությամբ:

Արևելահայ հատվածում այս հոսանքի մեջ են մտնում Անանիա Սուլթանյանը, Մովսես Բուդաղյանը, Հովհ. Բերբերյանը, Հովհ. Սահրատյանը, Երիտա-

սարգ Ղ. Աղայանն ու Հակոբ Մելիք-Հակոբյանը (Բաֆֆին): «Հյուսիսափայլ»-ի բանաստեղծներից այս հոսանքի հետ է կապվում նաև «Էկոնի վշտի» հեղինակը՝ Սմբատ Շահազիզը, ըստ երևույթին, ձիշտ այն չափով, ինչ չափով որ Ռ. Պատկանյանն է կապվում միանում ազգային-պահպանողական հոսանքի կամ խմբակցության հետ:

Հոսանքների այս խմբավորումը հիմնականում ձիշտ է արտահայտում հայ մտավորականության պաղատարական-քաղաքական այն շերտավորումը, որ տեղի էր ունենում 50—60-ական թվականներին:

Տալով այդ բաժանումը՝ հեղինակն իրավացիորեն հասարակական հոսանքները խստորեն ու անանցանելի պատկերելով չի բաժանում իրարից, ինչպես որ նշանք թե՛ իրենց անձնակազմի ներկայացուցիչների փոխադարձ հարաբերություններով և թե՛ դադափարական հարակցությամբ, իրականում խստորեն բաժանված չէին իրարից: Հեղինակն ակնառու փաստերով ցույց է տալիս, որ իրար հետ կենսական շփման ու միացման կետեր ունեին, մի կողմից, կղերա-ազգայական հոսանքը՝ լիբերալ-բուրժուական կամ նացիոնալ-լիբերալ հոսանքի հետ ցարական օրինադրի պաշտպանությամբ, մյուս կողմից, «ազգային-պահպանողական խմբակցությունը»՝ դեմոկրատական հոսանքի հետ, ցարիզմի նկատմամբ անհաշտ դիրքավորումով, թեև ազգային քաղաքական կյանքի վարդապետ, հայ ժողովրդի ապստամբության տարրեր ծրագրելով ու հեռանկարներով:

Պայքարի որոշ խնդիրներում նկատելով ու նշելով դեմոկրատների ու լիբերալների, դեմոկրատների ու նացիոնալ-պահպանողականների ընդհանրությունը՝ հեղինակը, սակայն, հետևողականորեն սահմանադրում է, մասնավորապես, սևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի մյուս բոլոր հոսանքներից:

Եթե հեղինակին կարելի է առարկել այս կամ այն հոսանքի առանձին ներկայացուցիչների բնութագրման խնդրում՝ բավականաչափ համոզիչ համարելով, օրինակ, ասենք, Սմբատ Շահազիզին սևոլյուցիոն-դեմոկրատների, կամ Ռ. Պատկանյանին՝ ազգային-պահպանողականների շարքը դասելը, ապա կարծում ենք, որ յուրջ առարկություն չի կարող լինել Հովհաննիսյանի նշած չորս հոսանքների դադափարական ու քաղաքական ուղղության բնութագրման խնդրում: Տեսականորեն յուրջ և փաստարկությամբ ակնառու է տրված հոսանքներից ամեն մեկի սահմանաբաժանումը, նրանցից յուրաքանչյուրի սկզբունքային տարրերի զգեք մյուսների համեմատությամբ: Այդ հոսանքների առաջացումը, նրանց ձևավորման բնթացքը և փոխադարձ հակամարտերը դիտելով իբրև ալյալ դարաշրջանի հայ կյանքի պատմական օրինադրության արդյունք, հայ բուրժուական հասարակական հարաբերությունների ձևավորմանն ու վարդապետն օրգանապես բնթացակցող երևույթ, հեղինակը ցույց է տալիս, որ հոսանքներից յուրաքանչյուրի սոսաջացման սոցիալ-տնտեսական պայմանավորվածությունը և հասարակական-քաղաքական դիրքորոշումը հասկանալի են միայն ներազգային և միջազգային (համառոտական և համալրողական) կյանքի պայմանների համատեղ հաշվառումով: Այսպես, օրինակ, թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ կյանքում կղերա-ֆեոդալական և լիբերալ-բուրժուական հոսանքների վախճ ու տաղանապր սևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի գոյության և հետզհետե աճող ուժի նկատմամբ դրսևորվում է ոչ միայն ներազգային կյանքի վարդապետն տեղեկների ազդեցությամբ, այլև համառոտական ու համալրողական փորձի հաշվառումով:

7. Հովհաննիսյանի մենագրության կարևոր արժանիքներից մեկը, Նալբանդյանի գործունեության առնչությամբ, արևմտահայ կյանքի, հասարակական հոսանքների, ազգային շարժման և հարակից այլ հարցերի լուսարանությունն է, որին նվիրված են մենագրության մի շարք գլուխներ. Նալբանդյանի արտասահմանյան ուղևորությունների բաժինը գրեթե ամբողջությամբ, առաջին հատորի վերջին բաժինն ամբողջությամբ, և բազմաթիվ էջեր նաև 2-րդ հատորում: Այստեղ մենք հաճախ ենք հանդիպում արևմտահայ գործիչների բնութագրումներին, հասարակական-քաղաքական կյանքի, ազգային շարժման և այլ հարցերի լուսարանության:

Ասացինք արդեն, որ Հովհաննիսյանի աշխատության հիմնական արժանիքներից մեկը, որը և հեղինակի կարևոր ներդրումներից է հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրության մեջ—դա ազգային հարցի վերաբերյալ Նալբանդյանի տեսության ընդարձակ շարադրանքն է:

Այս առնչությամբ էլ մենագրության մեջ առաջադրված է և ինքնուրույնարար լուծված՝ «հայ ազգի կազմավորման պրոցեսի» հարցը և տրված է պատմական այդ պրոցեսի հետ սերտորեն առնչվող ազգային հարցի մասին Նալբանդյանի տեսության վերլուծությունն ու գնահատականը: Իսկ այդ հարցը Նալբանդյանի դարաշրջանի հայ կյանքի (ինչպես և այն ժամանակ ձևավորված շատ ժողովուրդների կյանքի) և նրա գրական-հրապարակախոսական ու հասարակական-քաղաքական գործունեության կենտրոնական հարցերից է: Այդ հարցից են բխում և այդ հարցի հետ են օրգանապես առնչվում դարաշրջանի բազմաթիվ այլ հարցեր, որոնց նվիրված է եղել Նալբանդյանի կյանքն ու գործունեությունը:

«Հայ ազգի կազմավորման պրոցեսի» բնութագրման կապակցությամբ Հովհաննիսյանը առաջադրում ու քննում է ազգությունը կազմող տարրեր դասակարգերի տեղն ու դերը պատմական այդ պրոցեսում: Մի շատ լուրջ ու կարևոր հարց, որի ճիշտ լուծումից էլ կախված է տվյալ դարաշրջանի հայ ազգային-ազատագրական շարժման սոցիալական բնույթի ու շարժիչ ուժերի բնութագրումը, այդ շարժման մեջ տարբեր դասակարգերի տեղի ու դիրքի հարցերի ճիշտ լուծումը:

Զգտելով հայ ժողովրդի երկու հատվածներում ես բարձրացնել ազգային-ազատագրական պայքարը և օրգանապես միացնել այն համառոտական ազատագրական շարժմանը, թե՛ ցարիզմի և թե՛ սուլթանական ռեակցիոն-ֆեոդալական ռեժիմների դեմ, Նալբանդյանը, թե՛ օբյեկտիվորեն և թե՛ խորապես գիտակցված կերպով արտահայտում էր ազգակազմավորման, տարբեր հատվածների համագլխային միավորման պատմական տենդենցը համադեմոկրատական սկզբունքով:

Պրոգրեսիվ, դեմոկրատական հիմունքներով համագլխային ազգակազմավորման այդ տենդենցն էին արտահայտում արևմտահայ դեմոկրատները եռանդուն կերպով դործակցելով Մ. Նալբանդյանին, նրա գլխավորած համադեմոկրատական-համագլխային ազատագրական պայքարում:

Ուստի սխալ է ասել, թե հայ ազգի կազմավորումը տեղի ունեցավ միայն արևելյան Հայաստանում, անկախ արևմտյան հատվածից, որն, իբր, դուրս էր մնացել այդ պրոցեսից:

Անկախ այն մեծագույն խոչընդոտից, որպիսին հայ ժողովրդի պատմա-քաղաքական անջատվածությունն էր, երկու իրար հակադիր ու հակամարտ բռնա-

կալույթյունների տիրապետության տակ, այնուամենայնիվ, համահայկական ազգակազմավորման տենդինցն առանձնապես առկա է երկու հատվածների կյանքում ևս: Այդ տենդինցն է համազգային ազատագրական զաղափարի ու շարժման հիմքը: Սյս կապակցությամբ էլ հարկ է անել հետևյալ դիտողությունը:

Ձնայած այն բարձր գնահատականներին, որ տալիս է հեղինակը Նալբանդյանին, այնուամենայնիվ, նրա աշխատության մեջ տեղ-տեղ կան նաև այնպիսի բնութագրումներ, որոնք նվազեցնում ու նեղացնում են հայ մեծ ուղյուցիոների զաղափարական ազդեցության և նրա գործունեության շրջանակները: Այսպես՝ Հովհաննիսյանը մի քանի առիթներով գրում է, թե՝ Նալբանդյանը «ոռոտալ ղեմակրատիայի առաջնորդն էր» (հատ. 1, էջ 284, 589, և այլն):

Բայց Նալբանդյանը ոչ միայն ոռոտալայ, այլև՝ ընդհանրապես հայ ղեմակրատիայի համազգային ճանաչված առաջնորդն էր: Հենց ինքը հեղինակը՝ իր մենագրության մեջ ցույց է տվել, որ Նալբանդյանի գրական-հրապարակախոսական ու ուղյուցիոն-քաղաքական գործունեության նշանակությունը և իրական ազդեցությունը համազգային էին, հատկապես 1858 թվականից սկսած, երբ արևմտահայերն էլ իրենց ամենաառաջավոր օրգանների՝ Ս. Ոսկանյանի «Արևմուտք»-ի ու Հ. Սվաճյանի «Մեղու»-ի շնորհիվ, ճանաչեցին Նալբանդյանի հեղինակությունը, ճանաչեցին նրան, որպես հայ ժողովրդի ազգային և սոցիալական-ազատագրական պայքարի համազգային առաջնորդի:

8. Հեղինակը «Անտիպ երկերի» կոմենտարներից հետո նկատելի առաջընթաց քայլ է կատարել «Հյուսիսսփայլ»-ի խմբագրի և Նալբանդյանի միջև եղած կապն ու փոխհարաբերությունները պատմականորեն ճիշտ կերպով պատկերելու ուղղությամբ: Բայց չենք կարող չնշել, որ, այնուամենայնիվ, Հովհաննիսյանը դեռ չի հասել այդ փոխհարաբերությունների լիակատար ճշմարտացի պատկերմանը: Մենագրության մեջ դեռ նկատելի չափով մնում է այն ոչ հիմնավոր դրույթը, թե՝ իբր՝ 1859 թ. հոկտեմբերի 27-ին Դր. Սալթիկյանին գրած իր նամակից հետո, Նալբանդյանը «Հյուսիսսփայլ»-ին այլևս չաշխատակցելու վճռով էր հեռացել ամսագրի խմբագրությունից:

«Հյուսիսսփայլ»-ից ու Նալբանդյանից Նալբանդյանի «հեռանալու», նրանց միջև եղած կապերի «խզման», «Հյուսիսսփայլ»-ի խմբագրության մեջ իբր թե տեղի ունեցած «բախման ու պառակտման» հարցադրույթը, որի արդարացման հիմնական և միակ վավերագիրը համարվում է 1859 թ. հոկտեմբերի 27-ի նամակը, — այդ հարցադրույթը հիմնովին պետք է վերանայել, պատմական ճշմարտությունը վերահաստատելու համար: Այդ, իհարկե, ոչ այն առումով, թե պետք է վերանայվի «Հյուսիսսփայլ»-ի պաշտոնական խմբագրին տրվող բնութագիրը (որպես լիբերալ լուսավորականի) կամ վերանայվեն նրա և Նալբանդյանի միջև եղած զաղափարական-աշխարհայացքային և սոցիալական-քաղաքական դիրքավորումների տարբերությունները՝ մեղմելու իմաստով: Ամենևին ո՛չ: Այլ միայն ստուգապես պարզելու, ցույց տալու, որ իրենց էական-սկզբունքային տարբերություններով հանդերձ, տարբերություններ, որոնք, այդ, հետզհետե ավելի խորանում և ավելի ակնհայտ էին դառնում, այնուամենայնիվ, նրանց միջև «բախում» ու «պառակտում» տեղի չի ունեցել և Նալբանդյանն, ըստ էության ու փաստորեն երբևէ չի բողբել ու չի հեռացել «Հյուսիսսփայլ»-ից, ուր որ էլ նա գտնվելիս է

եղել՝ Պետերբուրգում, թե արտասահմանյան հետափոր ու երկարատև ուղևորության մեջ և կամ նույնիսկ բանտում՝ Ալեքսեևյան ռավիլիոնում:

1859 թ. հոկտեմբերի 27-ին նաև նոյեմբերի 18-ին Գր. Սարթիկյանին ուղղված Նալբանդյանի նամակները պետք է ուշադիր կարդալ և ճիշտ ու անկանխակալ հայացքով մեկնարանել: Այդ նամակները կարծեսցալ «սուր բախումների», «պառակաման», Նալբանդյանի հեռացման կամ Նաղարյանի «անբարյացակամ վերաբերմունքի» մասին վկայող վավերագրեր չեն:

Առանց որևէ հիմնավոր, ստույգ փաստարկման, ինչպես այլ հետազոտողներ, դժբախտաբար, նաև այս մենագրության հեղինակը, պնդում է այն ենթադրությունը, թե՝ մինչև Նալբանդյանի բանտարկվելը Նաղարյանն է, որ չի ցանկացել «Հյուսիսսփայլ»-ում տպագրել Նալբանդյանի այս կամ այն ստեղծագործությունը, հոգվածը և այդ պատճառաբանվում է նրանց «հարաբերությունների վատացումով» բաղաքական-դադափարական տարաձայնությունների հոգի վրա: Սխալ է. այդ ենթադրությունը հաստատույ ոչ մի ապացույց չկա:

Ինչո՞ւ մոռանալ, որ Նալբանդյանի կյանքի ամենածանր շրջանում, երբ նա Ալեքսեևյան ռավիլիոնում, որպես պետական ծանր հանցավոր, ենթակա էր ցմա՝ աքսորի, Նաղարյանը, իր անձն ու պաշտոնական հեղինակությունը վտանդի ենթարկելով՝ «անխոհեմ սիրելիի»՝ հոգվածները «Հյուսիսսփայլ»-ում տպագրում է իր սեփական ստորագրությամբ («Ազգային թշվառություն» հոգվածը և Բոկի աշխատությունից կատարված թարգմանությունը) և կամ մի այլ ծածկանունով (Փառախոտ Ցուպկանց) տպագրում է «Ուղերձ առ Մեղուխեշայն» բանաստեղծությունը, թաքցնելով այդ ամենը իր՝ Նաղարյանի արտահայտությամբ առած, «հազարաչքանի հետապնդումից» ոստիկանական դրաքննությունից:

Չենք բաժանում Աշ. Հովհաննիսյանի կարծիքն այն մասին, թե՝ ականքն է, որ Գյոթեի և Շեքսպիրի դիմաց «Հյուսիսսփայլ»-ի խմբագրի աչքում նախապատվի էին այլ հեղինակություններ» (հատ. 1, էջ 450): Անվերապահ ճիշտ չենք համարում նաև հեղինակի պնդումն այն մասին, թե «Նաղարյանը հետամտում էր գրականության «շիլլերականացման», ի տարբերություն Նալբանդյանի, որն, իրոք, արտահայտում էր «շեքսպիրականացման» տենդենցը:

Բայց անարդարացի կլինի և ոչ ճիշտ, թե Նաղարյանցի գեղագիտական բմբռնումները սահմանափակվում են գրականության ու թատրոնի «շիլլերականացման տենդենցով», թեև այս տենդենցն, ինքնին, այն ժամանակվա իրագրության մեջ, հալ կյանում, խորապես պրոգրեսիվ տենդենց էր և չէր հակադրվում, այլ զուգակցվում էր «շեքսպիրականացման» տենդենցի հետ՝ այն պրոգրեսիվ նշանակությամբ, որ ունեցել է Շիլլերի ստեղծագործությունն ու էսթետիկան XIX դարում քնդհանրապես և մանավանդ հալ գրականության մեջ ու հայկական րատրոնում՝ մասնավորապես:

9. Հովհաննիսյանի աշխատության մեջ ոչ միայն վիճելի, այլև հիմնավորապես առարկելի, ոչ համոզիչ, երբեմն ականհայտորեն սխալ տեղեր կան Նալբանդյանի ժամանակի և հետագա քառամյակի հայ մեծ բանաստեղծ Պատկանյանին նվիրված քննադատական էջերում: Այդ մասին կանգնողառանք քիչ հետո: Բայց ամենից առաջ նշենք, որ անարդարացի կլինի ասել (ինչպես՝ այդ ասում են), թե Պատկանյանի վերաբերյալ Հովհաննիսյանի տված քննադատումներն ամբողջովին սխալ են և անընդունելի: Այդ կարծիքը հիմնավոր չէ: Հովհաննիսյանն իր ուրույն կոնցեպցիան ունենալով՝ հայ գրական, դադափա-

րտկան՝ ու հասարակական-քաղաքական մասի հոտանքների զարգացման պատմության հարցերում, մասնավորապես, Նալբանդյանի ու Պատկանյանի փոխհարաբերության խնդրում, հատկապես այս մենագրության մեջ համեմատաբար շատ ավելի ճիշտ մոտեցում ունի Պատկանյանին բնութագրելիս, քան «Անտիպերկեր»-ի կոմենտարներում: Մինչդեռ աճյունի փաստորեն գրեթե ամբողջովին ժխտված էր Պատկանյանի ստեղծագործության պրոգրեսիվ տրեքն ու նշանակությունը հայ գրական-գեղարվեստական մասի և հայ ժողովրդի ազգային-սոցալազգրական պայքարի պատմության մեջ, այստեղ, ընդհակառակը, լրջորեն սրբազրելով վուլյար-սոցիոլոգիական բնույթի այդ մոտեցումը, Հովհաննիսյանը հիմնականում ճիշտ դիրքերի վրա է կանգնել, ինչպես Ստ. Նալբանդյանի, նույնպես և Ռ. Պատկանյանի գնահատման խնդրում:

Նա լուրջ փաստարկումներով ու վերլուծությամբ ցույց է տալիս ո՛չ միայն այն էական և սկնհայտ տարբերությունները, որ կան Նալբանդյանի ու Պատկանյանի միջև, այլև այն ընդհանուրը, որ կա դարաշրջանի երկու մեծ գործիչների միջև և որով Պատկանյանը, ինչպես նշում ու շեշտում է Հովհաննիսյանը, ակնհայտորեն տարբերվում է «ազգային-պահպանողական» աճյուն հոսանքից, որի զազափարական-քաղաքական դիրքավորումներին մոտ էր Պատկանյանը: Նշելով այս ընդհանուր գրականը, մենք միաժամանակ, Պատկանյանի գնահատման խնդրում ունենք հետևյալ առարկությունները.—

ա) Անհրաժեշտ է անհամոզիչ է Հովհաննիսյանի բացասական կարծիքը Պատկանյանի նկատմամբ՝ առանձնապես Իսկանդերի (այսինքն՝ Ալ. Գերցենի Լեյքսանդր 2-րդին ուղղված նամակի պատմության խնդրում (հատոր 1-ին, էջ 187—188)):

բ) Միակողմանիորեն է ներկայացված արևստա-ևլրոպական պետությունների նկատմամբ Պատկանյանի վերաբերմունքը և հայացքը: Հովհաննիսյանի ուշադրությունից վրիպել են Պատկանյանի մի շարք երկերն ու խիստ քննադական արտահայտությունները այդ պետությունների շարանենգ-զազանային դիվանդիտության դեմ, մանավանդ՝ «հայկական հարցի» կապակցությամբ:

գ) Մեր կարծիքով համոզիչ չէ Նալբանդյանի և Պատկանյանի հակադրությունը նրանց հայանի բանակովային բանաստեղծությունների հիման վրա, և այն՝ ի վնաս Պատկանյանի:

դ) Հիմնավորապես վիճելի ենք համարում Պատկանյանի լեզվին տրված դնահատականը: Վկայաբերելով Գր. Վանցյանին, մեր կարծիքով, անճիշտ մեկնարանելով նրա հայացքը, հեղինակը բացասական գնահատական է տալիս Պատկանյանի լեզվին՝ հայ ազգային գրական լեզվի մշակման ու հետագա զարգացման հեռանկարի տեսակետից: Հովհաննիսյանն աճյուն միտքն է հայտնում, թե, հետևելով կարամզինյան սկզբունքին («Երբի աշնպես, ինչպես խոսում ես և խոսիր աշնպես, ինչպես գրում ես»), Պատկանյանը ոչ միայն իր ըմբռնումով, այլև իր գրական-ստեղծագործական պրակտիկայում շեշտում էր գրական լեզվի ժողովրդայնության պահանջը, բայց անտեսում էր նրա ռամագգալնուրյան կարևորությունը» (հատ. 1-ին, էջ 112):

Սակայն, իրականում, Պատկանյանի բազմաթանր ու բազմերանգ ստեղծագործության լեզուն, հանրամատչելիության հիմքի վրա՝ զարգանում էր համազգայնության ուղիով: Պատկանյանի լեզուն համագգալնուրյան գրական լեզվի կազմավորման արոցեսի արտանայտություններից մեկն է XIX դարի երկրորդ քառորդում, ճիշտ այնպես, ինչպես որ նույն պրոցեսի արտահայտություններից է

Խ. Աբովյանի և Պ. Պողոջանի ստեղծագործության լեզուն, շնայած ուժեղ բարբառայնության առկայությանը: Ինչպես Աբովյանի ու Պողոջանի, նույնպես և Ռ. Պապկանյանի ստեղծագործությունների լեզուն հայ ժողովրդական բարբառների համակենտրոնացման պրոցեսի արտահայտություններից է համազգայնության գերիշխող տեղեկացով:

Տեղի սղության պատճառով մենք հնարավորություն չունենք գոնե համառոտակի անդրադառնալու ոչ Պատկանյանին և ոչ էլ մի քանի այլ գործիչներին տրված բնութագրումներին: Բայց միայն ընդհանուր առմամբ ասենք, որ ինչպես Պատկանյանին ու Նազարյանին, նույնպես և արևմտահայ գործիչներից մեկ-երկուսին (տաաջին հերթին Ստ. Ոսկանյան և Մ. Մամուրյան) վերաբերող բնութագրումներում կան նկատելի թերություններ, որոնք խանգարում են այդ գործիչների պատմական ծառայությունն ըստ արժանվույն գնահատելուն:

Տեղին է առանձնապես հիշել Վ. Ի. Լենինի միտքն այն մասին, որ մարդկանց պատմական ծառայությունների մասին դատում են ոչ թե նրանով, թե ի՞նչ շեն տվել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ի՞նչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ¹:

Չենք կասկածում, որ Լենինի այս իմաստուն դրույթի նշած ուղիով է ընթացել անվանի գիտնականի մտքի գործունեությունը, բայց նրա աշխատության մեջ, այնուամենայնիվ, նկատելի են առանձին այնպիսի թերություններ, որոնք արդյունք են այն բանի, որ Լենինյան այս դրույթը ոչ լիակատար հետևողականությամբ է կիրառվել:

Նալբանդյանի ժամանակի անվանի գործիչներից մի քանիսը բնութագրված են ոչ այնքան այն առումով, թե նրանք ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ, այլ գերազանցապես այն իմաստով, թե նրանք ինչ շեն արել առավելապես իրենց մեծ ժամանակակից՝ Նալբանդյանի համեմատությամբ:

Թերությունների դեպքի մասը հետևանք է այս ոչ ճիշտ մոտեցման, որն առկա է մենագրության առանձին էջերում:

10. Մեծ են նաև հեղինակի բանասիրական հմտության և խորագիտության սահմանները: Հայ ամբողջ գրականությանը (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) բազմակողմանիորեն գիտակ լինելու շնորհիվ է, որ նա բանասիրական այնպիսի հայտնություններ է կատարում, որ անսպասելի էին թվում մինչ այդ: Ահա, օրինակ, նա ստուգաբանում է Նալբանդյանի հռչակավոր Կոմս էմմանուել, ինչպես և միայն մեկ անգամ գործածված («Ուղերձ առ Մեղուխեչյան» ոտանավորի տակ) Փառախոտ Յուլիանյան ծածկանունները՝ ազգային պատմա-մատենագրական աղբյուրների հիման վրա:

Նա բացատրում է, որ այդ «կեղծառնունը կազմած է հորենացու հիշատակած «արի» Փառուխ և «կայտառ» Յուլի եղբայրների անուններից (հմմ. հոր. Ա. 12), ճիշտ այնպես, ինչպես Կոմս էմմանուել կեղծանունը կազմվել էր Փավստոսի հիշատակած Կոմս և Մանվել եղբայրների անուններից (հմմ. Փավստոս, Է. 37)²:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, էջ 229:

² Հատ. 2, էջ 347:

Հետաքրքրական է տեքստաբանական այն սուր դիտողությունն ու ճշտումը, որ անում է հեղինակը Նալբանդյանի «Յաղագս հայկական մատենագրության ճառ»-ի ձեռագիր հավելումների մասին: «Կասկածից դուրս» համարելով Նալբարյանցի ազդեցությունը Նալբանդյանի նշանավոր այդ երկի վրա» հեղինակն այդ հաստատում է ոչ միայն «Ճառի»-ի և Նալբարյանցի «Յաղագս փորձնական հոգերանություն» վերնագրերի նմանության փաստով, այլև՝ լույս տեքստի էական տվյալներով:

Հեղինակն այնուհետև անհիմն է համարում Ելժ-ի՝ «Ճառը» ծանոթագրող տեքստաբանի այն կարծիքը, թե՝ «Ճառ»-ի ինքնագրի վրա կատարված «ուղղումներ» և ոչ մեկը, ոչ մի լատ տառացիորեն, չի պատկանում Նալբարյանին: Այդ հայտարարության ճշտությունը չհավատալով, Հովհաննիսյանը «Ճառ»-ի բնագիրը անձամբ համեմատում է Նալբարյանի ձեռագրերի հետ և հանգում միանգամայն հակառակ եզրակացության: Նա պարզում է, որ «Ճառ»-ի հեղինակային ինքնագրի լուսանցքներում, և հաճախ նաև բուն շարադրանքի վրա կատարված բազմաթիվ խմբագրումները կատարված են ոչ թե Նալբանդյանի, այլ Նալբարյանի ձեռքով²:

Մենք խորապես համոզված ենք, որ առ այսօր ստեղծված Նալբանդյանադիտական գործերից՝ մեծ ուղղուցիտների ու մտածողի «Երկերի լիակատար ժողովածուի» գիտական հրատարակության շորահատորյակի հետ միասին, երկու գործ ևս համեմատաբար ավելի երկարատև գոյության իրավունք են նվաճել իրենց արժեքի մնայնությամբ: Դրանք են՝ «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր մենագրությունը և Ա. Ինճիկյանի «Միքայել Նալբանդյանի կյանքի ու գործունեության տարեգրությունը»:

Այս մենագրության նկատելի և դեռ գուցե չնկատված թերությունները չեն իջեցնում նրա արժեքն ու նշանակությունը ամբողջ Նալբանդյանագիտական գրականության մեջ: Եվ այդ, ամենից առաջ, այն բանի շնորհիվ, որ այն տեղ հայ մեծ ուղղուցիտն-դեմոկրատ էնցիկլոպեդիստի գործունեությունը լուսաբանված է աննախընթաց լայն ու խոր ընդգրկումով՝ հանրագիտորեն:

ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆ

² Այստեղ հեղինակը ծանոթություն է տալիս, նշելով, որ՝ իրենից միանգամայն անկախ, ինքնուրույն տեքստաբանական հետազոտությամբ նույն համոզմանն է հանգել նաև բանասեր Մայիս Ավդարեկյանը (հատ. 1, էջ 109):